ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ և ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ Վ. ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 80 ԴՊՐՈՑԻ

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ ԳՈՀԱՐ ՎԱՆԵՍՅԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ ԱՆԱՀԻՏ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ.....5
ԳԼՈՒԽ 2.ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՄԱՐԴՈՒԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....7
2.2.ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ <<ՉԱՐԻ ՎԵՐՋԸ>> ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....10
2.3.<<ԿԱՐԴԱՑԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ >>ԹԵՄԱՅՈՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ.....26
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....27
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջին դպրոցականը պետք է իմանա իր իրավունքներն ու պարտականությունները և դրանք ամրակայի իր վարքի մեջ: Սա մանկավարժական, հասարակական պահանջ է, որը պիտի իրականացվի հանրակրթական դպրոցում՝ դասավանդվող բոլոր առարկաների դասաժամերին , մասնավորապես՝ մայրենիի ծրագրային նյութերի շրջանակում: Ձևավորել դպրոցականի իրավական մշակույթը, նշանակում է նրա գիտակցությանը հասցնել և ամրակայել տվյալ պետությունում, հասարակությունում ընդունված իրավական նորմերի պահանջները:

Այսպիսով, մեր հիմանխնդրի արդիականությունը պայմանավորված է մի կողմից՝ իրավական հասարակություն ունենալու, մյուս կողմից՝ այդ հասարակության մեջ աշակերտի դերի փոփոխությամբ: Այս համատեքստում կարևոր է մայրենիի ուսուցման գործընթացում գործունեության նոր ձևերի ներդրումը, որոնցից մեկն է կարդացած ստեղծագործության բովանդակության վերլուծումը և գաղափարի բացահայտումը երեխայի իրավունքների տեսանկյունից:

Մեր ուսումնասիրության նպատակը՝ մշակել մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունների բովանդակության և գաղափարի վերլուծության ճանապարհով սեփական իրավունքները ճանաչելու աշակերտների կարողությունները ձևավորող մեթոդական ցուցումներ:

Ուսումնասիրության խնդիրներն են՝

- ուսումնասիրել հետազոտության թեմայի շուրջ առկա մասնագիտական գրականություն և վերլուծել հենակետային մտքերը.
- բացահայտել իրավական գաղափարներ պարունակող ստեղծագործություն-ների ընդգրկվածությունը միջին դասարանների մայրենիի դասագրքերում.
- կարդացած ստեղծագործությունների բովանդակության վերլուծության ճանապարհով բացահայտել երեխաների իրավագիտակցության մակարդակը .
- պարզել ուսուցիչների իրազեկվածությունը երեխայի իրավունքների տեսանկյունից և այդ ուղղությամբ մայրենիի ուսուցման դասագործընթացում հնարավոր գործունեությունը:

Հետազոտության մեթոդները.

- տեսական՝ հետազոտության թեմային վերաբերող հոգեբանամանկավարժական գրականության, մայրենիի և առարկայական չափորոշիչների ու ծրագրերի, ուսումնամեթոդական ձեռնակների վերլուծություն.
- փորձարարական՝ հարցազրույցներ, հարցաթերթիկային ուսումնասիրություն, դասալսումներ, դասերի վարում.

Հետազոտության նորույթը: Մայրենիի դասընթացը դիտարկվել է երեխայի իրավունքների տեսանկյունից. մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունների բովանդակության շուրջ աշխատանքում քննարկվել են նաև երեխայի իրավունքների բաղադրիչը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը. Երեխայի իրավունքների և պարտականությունների շուրջ իրականացրած աշխատանքների արդյունքները կարող են հետաքրքրել ուսուցիչներին և ուսանողներին , նրանց համար նյութ դառնալ երեխաների իրավունքներին վերաբերող աշխատանքի իրականացման ընթացքն ու միջոցներն ուսումնասիրելու համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առանձին միջին դպրոցականներ հակված են դեպի իրավախախտումները: Պատճառները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Հիմնական պատճառները անբարենպաստ ընտանիքներն են և սոցիալական վատ պայմանները: Մեր ուսումնասիրությունների ընթացքում բացահայտել ենք , որ իրավախախտ երեխաներին սովորաբար հատուկ են հասարակական օրենքների վերաբերյալ աղավաղված գիտելիքներն ու հետաքրքրությունները մարդկության կողմից ստեղծված սոցիալական արժեքների նկատմամբ :Հասարակության բազմադարյան փորձը հաստատում է, որ անձի ձևավորումը ճիշտ չի ընթանում ոչ միայն անբարենպաստ ընտանիքներում, այլ նաև այնպիսի ընտանիքներում, որոնք թաքնված դիմակի տակ՝ ձևացնում են, որ իրենց ընտանիքները հաջողակ են, օրինակելի: Այդպիսի ընտանիքներում երեխաները, անշուշտ, բացասական, անընդունելի վերաբերմունք են դրսևորում ուսման, դպրոցի, դաստիարակչական աշխատանքների նկատմամբ: Բնական է, որ նման դպրոցա-կանների մեջ աստիճանաբար ձևավորվում է ձգտում դեպի եկամտաբեր աշխատանքը, դեպի օգուտն ու շահը:

Պահանջատիրական այսպիսի դաստիարակությունը սոցիալական չէ , և ահա որոշ դպրոցականներ զրկվում են սոցիալականացումից: Այդպիսի ընտանիքների երեխաները աչքի են ընկնում հանցանքներ կատարելու ակտիվությամբ: Նման երեխաների վրա ավելի ուժեղ և դրական ազդեցություն կարող են ունենալ նրանց տարեկիցները , շրջապատի երեխաների լիդերները :

Անկախ այս հարցում ընտանիքի ունեցած դերից՝ իր անելիքն ունի դպրոցը, ողջ կրթական համակարգը: Կրթության օբյեկտն անձն է, դրա արդյունքը՝ անհատի կրթվածությունը (գիտելիք, դաստիարակություն, զարգացում): Մանկավարժության այսպիսի մեթոդաբանական մոտեցումներով առաջնորդվելով՝ Կրթության մասին ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին կետը կրթությունը բնորոշում է որպես անձի, հասարակության, պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության

գործընթաց, որը նպատակամղված է գիտելիքները պահպանելու սերունդներին փոխանցելուն:Մտածելու տեղիք է տալիս. ինչու՞մարդկությունը , ապրելով երկրի վրա, միայն 20-րդ դարի երկրորդ կեսին սկսեց մարդու իրավունքների համընդհանուր ճանաչման գործընթացը:

Մարդու իրավունքների հիմնախնդիրը հազարամյակների պատմություն ունի: Այն իր արտացոլումն է գտել կրոնական, մշակութային, փիլիսոփայական մտքի ու իրավական զարգացումների մեջ: Տարբեր աշխարհամասերից ընտրված մի շարք հնագույն փաստաթղթեր, իսկ ավելի ուշ՝ կրոններ ու փիլիսոփայություններ արտահայտել են որոշակի հայեցակարգեր, որոնք կարող են համարվել մարդու իրավունքներ: Մարդու իրավունքներ ի մասին դեկլարացիայի հիմքերը դրվել են այնպիսի մտածողների կողմից, ինչպիսիք են Սոկրատեսը, Պլատոնը, Մաքիավելին: Ընդհանրապես, ինչու՞ է մարդուն անհրաժեշտ իմանալ իր իրավունքները: Պատասխանը միանշանակ է , որպեսզի նա հստակ իմանա, թե ինչ կարող է ակնկալել կյանքից: Եթե մարդը չգիտի իր իրավունքները և պարտականությունները, պատկերացում չի կարող ունենալ, թե ինչ պետք է անի, եթե ստեղծվի դժվար իրավիճակ, նա անպաշտպան կլինի հնարավոր տհաճ իրադարձություններից: Հին հռոմեական ասացվածքն ասում է. Որտեղ կա իրավունք**,** այնտեղ կա պաշտպանություն:

Ապրելով 21-րդ դարում և մեր վրա զգալով այն բոլոր իրադարձությունների ազդեցությունը, ինչ ամեն օր տեղի է ունենում մեր շուրջը, և ինչը ուղղակի թե անուղղակի ձևով ազդում է մեր կյանքի որակի վրա՝ անհրաժեշտ է ճանաչել մեր իրավունքները:Ուսուցման գործընթացում պիտի ձևավորել սովորողների այն համոզմունքը, որ այն միջավայրում, որտեղ մենք ապրում ենք, որտեղ անցնում է մեր կյանքը, կարող ենք առնչվել մեր իրավունքների խախտման բազում դեպքերի : Իսկ երբ խախտվում են մեր իրավունքները, երբ մենք չենք կարողանում ինքներս մեզ պաշտպանել ցանկացած տիպի ոտնձգություններից, , մենք դառնում ենք խոցելի, մենք չենք կարողանում լիովին ու մեր հնարավորությունների չափ ինտեգրվել հասարակության արժանի անդամների շարքը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

2.1 Մարդու իրավունքների քննարկումը Հ.Թումանյանի ստեղծագործությունների ուսումնասիրման ընթացքում

Մեր կարծիքով `այսօր «Թումանյանական ժամանակներից շատ բան չի փոխվել. Ամեն քայլափոխի հանդիպում ենք Մարոների և Կարոների, հառաչանքով լցված ծերունիների եւ Գիքորների, դժբախտ Անուշների եւ սկեսուրից հալածվող հարսների, միամիտ շների եւ խորամանկ կատուների»: «Մարդու իրավունքները Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում» խորագրով արտադասարանային ընթերցանություն անցկացրինք Վաղարշ Վաղարշյանի անվան Հմ. 80հիմնական դպրոցի 5-րդ դասարանում ` նպատակ ունենալով Թումանյանի ստեղծագործությունների միջոցով դպրոցականներին իրազեկել մարդու իրավունքների մասին:

Մեր ուսումնասիրությանը մասնակից 31 դպրոցականներից 29-ը իրենց կարծիքներում մտահոգություն հայտնեցին մարդու իրավունքների հաճախակի խախտումների մասին: Շատերի կարծիքով՝ դեռևս Թումանյանի ժամանակներից սկսած ` «մինն իր կամքին՝ ինչ ասես՝ անում է, մյուսը խոսելու իրավունք չունի»: Խոսելով , քննարկելով, վերլուծելով անարդարությունների, իրավունքների ոտնահարման մասին, երեխաներն իրենց կարծիքը հայտնեցին Թումանյանի խոսքերով ` «քանի երկրում կա շահ ու գերի, ստրուկ ու տեր, չի լինելու երկրի վրա, ո՛չ շիտակ խոսք, ոչ կյանք ոչ սեր…»:[9]

Մեր մանկավարժական պրակտիկայի ընթացքում ավելի հաճախ անդրադարձել ենք Թումանյանի այն ստեղծագործություններին, որոնք վերաբերում են մարդկանց սոցիալական իրավունքի խախտմանը: Առավել բուռն քննարկում սկսվեց հետևյալ արտահայտության շուրջ «Ես կարծում եմ՝ քանի կան հարուստ ու աղքատ, չի կարող հավասարություն լինել մարդկանց միջև»:

Վերլուծելով<<Պարտքատերը գանգատ գընաց, քյոխվեն կըգա կծեծի, Տերտերն օրհնեց, անվարձ մնաց, կբարկանա, կանիծի ···>>և նման այլ տողեր, երեխաներն ափսոսանք հայտնեցին ,որ մարդիկ այն ժամանակներում իրենց իրավունքները պաշտպանելու

փոխարեն հույսները դրել են, թե<<Մի մեծ ապիկա երկրնքում, Նա շատ ունի այնտեղ հաց ···>>:

Աշակերտների հետ «Գիքորը» պատմվածքը վերլուծեցինք փոքրիկ տղայի իրավունքների ոտնահարման տեսանկյունից: Ուղղորդող հարցերի միջոցով աշակերտները հասկացան , որ «Գիքորն անչափահասներին շահագործելու իրավունքի խախտման օրինակ է»: Նույն հերոսի մասին 5-րդ դասարանի աշակերտներից մեկը նշեց· «Մեր ժամանակներում դա կոչում են թրաֆիկինգ, առաջ կարևոր չի, թե ինչ է կոչվել, գուցե ոչ մի անուն էլ չի ունեցել, բայց դրանից բովանդակությունը չի փոխվել, Գիքորը թրաֆիկինգի զոհ է»: Այսօրինակ վերլուծությունը 5- րդ դասարանի աշակերտի կողմից զարմացրեց անգամ մեզ:

Մեկ ուրիշ աշակերտ էլ ասաց,որ. «Գիքորը չէր գիտակցում իր իրավունքների մասին, բայց եթե անգամ գիտակցեր՝ ո՞ւմ պիտի բողոքեր, իրավունքն ու օրենքը դեռ էն ժամանակներից ուժեղների ձեռքում են»: Դրանով են երեխաները բացատրում նաև Գիքորի հոր վախը «խազեինների» հանդեպ, երբ Գիքորին հանձնելով Բազազ Արտեմին՝ Համբոն խորհուրդ է տալիս որդուն՝ հնազանդվել խազեինին. «Շատ հաճախ իրանք կուտեն, քեզ տալ չեն…»: «Ես էլ եմ Գիքոր, բայց ես կպայքարեմ»,- վրդովված ասաց աշակերտը :

Աշխատանքի իրավունքի խախտում է դիտարկվել նաև «Տերն ու ծառան» հեքիաթն ուսումնասիրելիս .ըստ դպրոցականների՝ «տերը հիմարացնելով անգրագետ գյուղացուն, աշխատացնում և չի վարձատրում»:

Վերլուծելով «Թագավորն ու չարչին» բալլադը՝ աշակերտները նկատեցին ,որ այնտեղ արտացոլված է խոսքի ազատության իրավունքի ոտնահարումը: «Ծերունին իր խոսքի համար վճարեց կյանքով»,-մեկնաբանեցին նրանք և շատ տխրեցին:

Նախապես մշակված հարցերի միջոցով քայլ առ քայլ մոտեցանք ստեղծագործության հիմնական գաղափարին. աշակերտները հասկացան ,որ ՝ «Չարի վերջը» ստեղծագործության մեջ իրավունքի ոտնահարման մի քանի օրինակներ կան, որոնցից մեկը սեփականության իրավունքի խախտումն է՝ «Էս ծառը իմն է, էս սարն իմն է ….»: Երկրորդ խախտումն, ըստ աշակերտի , այնէ, որ «կկուն ձագերին կորցնում է իր իրավունքների մասին անտեղյակ լինելու պատճառով»:

«Թումանյանի «Շունն ու կատուն» առաջին հայացքից պարզ, մանկական

ստեղծագործություն է թվում, սակայն այն վերլուծելով անձի իրավունքների տեսանկյունից աշակերտները եկան այն եզրակացության ,որ իրականում կատուն խաբում է շանը, «սեփականաշնորհում նրա գույքը», սակայն չի պատժվում օրենքով, ինչը հաճախ տեղի է ունենում նաև մեր օրերում»: Այս առնչությամբ քննարկեցինք << Ի՞նչ անել >> հարցը : Երեխաներից մեկը վրդովված բացականչեց , որ ինքը երբեք թույլ չի տա , որ իր հետ այդպես վարվեն : Մեկ ուրիշն էլ ասաց ,որ իրենք արդեն գիտեն իրենց իրավունքները , և թույլ չեն տա ,որ իրենց խաբեն: Ուսուցչի այն հարցին , թե ինչպես կարելի է դա անել՝ երեխաները միաբերան պատասխանեցին . << Պետք է անմիջապես դիմել ոստիկանին >>: Նրանց կարծիքով , կատուն կարողացավ խաբել շանը, որովհետև շունը չգիտեր իր իրավունքները: Ասացին նաև ,որ իրենք շատ լավ պիտի իմանան իրենց իրավունքները, այդ դեպքում իրենց ոչ ոք չի կարողանա խաբել:

Առաջարկեցինք կարդալ Թումանյանի ստեղծագործություններից՝ բացահայտելով մարդու իրավունքների ոտնահարման օրինակներ: Հետաքրքիր է, որ Թումանյանի ստեղծագործությունների հերոսների՝ Մարոյի, Անուշի կերպարները վերլուծելիս աշակերտները դրանք դիտարկեցին որպես գենդերային խտրականության օրինակներ: Նույն չափանիշով գնահատեցինք նաև Գիքորի մոր կերպարը. «Հայրն ուզում էր Գիքորին քաղաք տանի, կինը չէր համաձայնում: «Կինն իրավունք չուներ խոսելու. Մի համարձակ հայացք, մի ավել բառ և ամուսնու ձեռքը կիջներ նրա դեմքին»,- հիշեցին երեխաները, և քննադատեցին հորը՝ հիմնավորելով , որ հայրն իրավունք չուներ բռնանալու ընտանիքի անդամների կարծիքի վրա:

Համեմատելով մարդու իրավունքների գաղափարը Թումանյանի և մեր ժամանակների հետ՝ նկատեցինք որ ավելի հաճախ երեխաների մեջ գերակշռում է մռայլ տրամադրությունը: Սակայն միաժամանակ ուրախալի էր, որդպրոցականները հուսահատված չէին. Նրանք վկայակոչում էին Թումանյանի տողերը՝ն շելով, որ «Էսենց չի մնա»: Երեխաները նկատեցին , որ Թումանյանը երազում էր «հեռու մի անկյան, մանկան արդար քնի, երազի մեջ երջանիկ, հաշտ ու խաղաղ մարդկության մասին»: Աշակերտների կարծիքով՝այսպիսի մոտեցումը հիմա էլ է հնարավոր, եթե օրենքի գերակայություն լինի:

2.2.ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ <<ՉԱՐԻ ՎԵՐՋԸ >> ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք, և ոչ ոքի չի կարելի զրկել կյանքից:

Մինչև ստեղծագործության ուսումնասիրումը գրատախտակին փակցրեցինք այսպիսի մի պաստառ: Աշակերտները կարդացին գրվածը , և ծավալված հարցազրույցի միջոցով ընթացավ ակտիվ երկկողմանի զրույց: Այնուհետև դիտարկեցինք Հովհաննես Թումանյանի «Չարի վերջը ստեղծագործությունը մարդու իրավունքերի տեսանկյունից: Նշենք , որ նրա բովանդակությունը կյանքի իրավունքի, սպառնալիքներից զերծ մնալու համատեքստում է: Այս ստեղծագործության մեջ հիմնական խնդիրն այն է, որ<<կկուն իրավագիտակցության ցածր մակարդակ ունենալու պատճառով>>թույլ է տալիս իր ձագերի կյանքի իրավունքի խախտում, ինչը նույնպես անթույլատրելի է:

Դասի պլանի նմուշ

Առարկա՝ Մայրենի

Հեղինակը՝Հ. Թումանյան

Դասի թեման՝<<Չարի վերջը>>

Հովհաննես Թումանյանի <<Չարի վերջը>>ստեղծագործության վերլուծության ժամանակ աշակերտների ուշադրությունը հիմնական մտքի վրա բևեռելու նպա-տակով որոշեցինք աշխատանքն իրականացնել ԽԻԿ համակարգով: Բնականաբար գաղափարի բացահայտման ուղղությամբ աշխատանքը պիտի կատարվեր դասի իմաստավորմ անփուլում: Որոշեցինք ստեղծագործության գաղափարը դիտարկել մարդու իրավունքների տեսանկյունից: Երեխաներին այդ ուղղությամբ մտածել տալու համար նախապես մշակեցինք հարցազրույցի հարցերը, որոնց շուրջ էլ քննարկում կազմակերպեցինք :

Խթանման փուլ

Նպատակը՝բացահայտել և ամրակայել մարդու իրավունքների մասին երեխաների ունեցած տեղեկություններն ու դրանց վերաբերյալ նրանց մոտեցումները: Նշենք, որ դեռևս տարրական դասարաններից աշակերտները որոշակի տեղեկույթ ունեին իրենց իրավունքների և պարտականությունների մասին:

Հարցազրույցի մոտավոր բովանդակությունը

1. Եկե՛ք հիշենք մարդու իրավունքների և պարտականությունների մասին:
2. Որո՞նք են ձեր իրավունքները:
3. Որտեղի՞ց կարելի է դրանց մասին իմանալ առավել մանրամասն:
4. Երբ ձեր իրավունքները խախտվում են ,ի՞նչ եք անում , ու՞մ եք դիմում:
5. Իսկ ի՞նչ կարող է պատահել,եթե մարդիկ չիմանան իրենց իրավունքները:
6. Երբևէ պատահե՞լ է , որ խախտվեն ձեր կամ ձեր միջավայրի մարդկանց իրավունքները: Ի՞նչ եք արել այդ դեպքում:

Հեքիաթի ընթերցում կարդալու բոլոր տեսակներով.

Իմաստավորման առաջին փուլ

Այն իրականացվում է կանգառներով և ընտրովի ընթերցանության ճանապարհով: Մեկնողական ընթերցանության ժամանակ դիտարկեցինք հեղինակային բառերն ու արտահայտությունները, ինչպես նաև հենակետայինհատվածները:

Օրինակ՝ աշակերտները կարդացին <<Էս սարը իմն է, էս ծառը իմն է, Ծառում փչակ կա , Փչակում՝մի բուն, էս ո՞վ է եկել , Տիրացել թաքուն>> քառատողը և մեր ուղղորդող հարցերի օգնությամբ մեկնաբանեցին:

Ուղղորդող հարցազրույցի մոտավոր բովանդակությունը.

1. Ինչո՞ւ է աղվեսը նշում, որ <<Ծառում փչակ կա, Փչակում՝մի բուն >>:

- Որպեսզի կկուն համոզվի , որ սարն ու ծառն աղվեսինն է, և նա լավ է ճանաչում իր ունեցվածքը:

2. Ինչու՞ է հեղինակը գործածել << տիրացել թաքուն >> արտահայտությունը:

- Որ կկուն հասկանա, թե այդ բույնն իրենը չի, ինքն իր բույնն այստեղ թաքուն է դրել, ու լքի այն:

Այս հարցից հետո դասարանը միանգամից լռեց / նրանք այդ մասին չէին մտածել /: Հանկարծ աշակերտներից մեկը պոռթկաց.

-Կկուն մեղավո՛ր էր , նա պիտի իր ձագերին չգցեր, պիտի պաշտպաներ:

-Ինչպես՞: Եկե՛ք մտածենք ՝ ինչպես կարող էր կկուն փրկել իր ձագերին : Աշխատանքն իրականացնում ենք << Մտագրոհ >>մեթոդական հնարով: Ընթացավ ազատ քննարկում, որի ժամանակ աշակերտները ներկայացնում են տարբերակներ: Դրանք գրառվում են գրատախտակին:-Կկուն պիտի իր բույնը փոխեր: -

Կկուն պիտի կոպտեր աղվեսին, վախեցներ, միևնույն է ՝ աղվեսը չէր կարող հասներ ծառի փչակին:

-Կկուն կարող էր խաբել աղվեսին, չասեր , որ ձագուկներ ունի:

-Կկուն պիտի ուշադիր լիներ և նախապես այդ մասին ասեր ագռավին:

-Կկուն կարող էր սարում ապրող ուժեղ գազաններից մեկին օգնության կանչել:

-Կկուն լաց լինելու փոխարեն պիտի պահպաներ իր ձագուկներին:Այսպիսով , աշակերտների դատողություններն աստիճանաբար սկսեցին գնալ այն ուղղությամբ, որից սկսել էինք խթանման փուլում:

- Երեխանե՛ր, հիշու՞մ եք՝ դասի սկզբին նշեցինք, որ մենք պաշտպանված ենք, երբ գիտենք մեր իրավունքները: Կկուն գիտե՞ր իր իրավունքները:

Երեխաները զարմացան . ի՞սկ ինչ իրավունքներ պիտի ունենար կկուն: Ուղղորդող հարցերի միջոցով աշակերտներն աստիճանաբար հանգեցին եզրակացության:

Կշռադատման փուլ

Այս փուլում մեր ուղղորդող հարցերի միջոցով երեխաները փորձեցին ամփոփել.

- Եթե կկուն իմանար, որ սարի վրա բոլոր կենդանիներն ու թռչունները հավասար ապրելու, տարածք ունենալու իրավունք ունեն, նա չէր հավատա աղվեսին և իր ձագերին չէր տա նրան:
- Կկուն պիտի դիմեր օրենքին, օրենքը նրան կպաշտպաներ: Կկուն խելացի չէր ,

նա իրոք << հիմար կկու էր>>, դրա համար էր աղվեսը նրան խաբեց: Հավանաբար աղվեսն այդպես վարվեց, որովհետև կկուն չէր կատարում իր մայրական պարտականությունները:

Այնուհետև գրատախտակին գծվեց չորս վանդակ ունեցող մի մեծ ուղղանկյուն: Յուրաքանչյուր վանդակ վերնագրվեց: Ստացվեց այսպիսի քառաբաժան.

Ինչու՞ տխրեցի	Աղվեսը մեղավո՞ր էր
● Կկվի ձագերը մեղք էին : ●Կկվի լացը շատ տխուր էր: ● Կկուն չկարողացավ պահպանել իր ձագերին, նա թույլ էր: ●Ես տխրեցի, որովհետև աղվեսն այդքան ագահ էր:	●Մեղավոր էր,որ ճտերին կերավ: ●Մեղավոր չէր . նա քաղցած էր : ●Մեղավոր էր, որովհետև ստեց: ●Մեղավոր չէր. նա այդպես է ապրում:
Խորհուրդ կկվին	Ի՞նչ իմացա
●Երբեք ձագերին մի տուր ուրիշին: ●Իմացի՛ր քո իրավունքները: ●Բու՛ն հյուսիր ապահով վայրում: ●Միշտ հետաքրքրվի՛ր օրենքով: ●Իմացի՛ր, թե ում է պետք դիմել վտանգի պահին:	●Վտանգի պահին պիտի զանգել 911: ●Պաշտպանված լինելու համար պիտի իմանաս քո իրավունքները: ●Որ կկուն իր ձագերին երբեք չի պաշտպանում: ●Որ չարը պատժվում է:

<<Քառաբաժանի>>քննարկումը ցույց տվեց, որ դասը հասավ իր ցանկալի ավարտին:

Թումանյանի<<Չարի վերջը>>ստեղծագործության շուրջ որոշեցինք կազմակերպել մի փոքրիկ դատավարություն նույն դպրոցի՝ զուգահեռ 5-րդ դասարանի աշակերտների հետ: Այն կազմակերպեցինք կշռադատման փուլում: Նախ կատարեցինք դերաբաժանում: Աղվեսն ու ագռավը դարձան պետության ներկայացուցիչներ, աղվեսը՝ օրինախախտ պաշտոնյա, ագռավը կկվի իրավաբանը , իսկ կկուն տուժած կողմը:Այս կերպարների դերերում ներկայացան երեխաներից մի քանիսը, իսկ մյուսները հետևում էին դատավարությանը և ակտիվ մասնակցում բոլոր քննարկումներին: Բնականաբար, ողջ ընթացքը դիտարկեցինք մարդու իրավունքների տեսանկյունից. Մասնավորապես վեր հանեցինք մարդու կյանքի՝ ապրելու իրավունքի հարցը: Ստացվեց շատ հետաքրքիր մի դաս-միջոցառում, որը բավականին արդյունավետ էր:

Այս ստեղծագործության բովանդակության մեջ հիմնական խնդիրն այն է, որ կկուն իրավագիտակցության ցածր մակարդակ ունենալու պատճառով թույլ է տալիս իրձագերի կյանքի իրավունքի խախտում, ինչը նույնպես անթույլատրելի է:

Մենք աշակերտների հետ պայմանավորվեցինք աղվեսին դիտենլ որպես պետության ներկայացուցիչ, որը սուտ , անհիմն պատրվակով ամեն անգամահաբեկում, ճնշում, սպառնում է կկվին: Նա հավատացնում է կկվին , որ կարող է <<ծառը կտրել>>, <<անտառն իրենն է>>, իսկ կկուն, /դիտել որպես անձ/, չդիմանալով ճնշումներին, ունենալով ցածր իրավագիտակցության մակարդակ՝ վախից ձագերին հերթով տալիս է աղվեսին՝ առանց մտածելու, որ իր ձագերն ունեն կյանքի իրավունք, և ոչ-ոք չի կարող ոտնձգություն իրականացնել, խախտել նրանց կյանքի իրավունքը:

Երեխաներից մեկն ամբողջացրեց:

<<Ամեն անգամ ձագին տալուց հետո կկուն սգում էր իր ունեցած կորստի համար, սակայն լացն ու սուգը օգուտ չեն, իրավունքների համար պայքարել է պետք, լացելը չի կարող զենք հանդիսանալ>>:

Փաստորեն դեռևս տարիներ առաջ Թումանյանն այս ստեղծագործությամբ մարդու իրավունքների մասին է խոսել, հորդորել է՝ պաշտպանել սեփական իրավունքերը, չենթարկվել անհիմն սպառնալիքներին /ՀՀօրենքը<<Երեխայի իրավունքների մասին , հոդված 5>>:[11]

Երեխաների հետ զրույցի ընթացքում մենք բացատրեցինք , որ եթե աղվեսը նույնիսկ ծառի ու անտառի նկատմամբ իրավունքներ ունենար, միևնույն է՝ չի նշանակում, թե ինքը կարող է կկվի կյանքի իրավունքը խախտել, քանի որ պետությունն իր մայր օրենքով ամրագրել է կյանքի իրավունքի պաշտպանված լինելու դրույթը:

Երեխաները եզրակացրին որ Թումայանի այսստեղծագործության մեջ աղվեսն իր կողմից կատարած իրավախախտման համար համապատասխան պատժի է ենթարկվում, գնում ընկնում է շան թակարդը:

Մեր առաջարկով երեխաներն ամփոփեցին , որ կենդանական աշխարհում աղվեսի այս ցավալի պատմությունն իմանալով՝ այլևս որևէ աղվես նման խախտում թույլ չի տա , իսկ անպատժելիության մթնոլորտը իրավունքների նորանոր խախտումների պատճառ կդառնա:

Այս օրինակ վերլուծություններից հետո երեխաները միանշանակ եկան այն եզրակացության, որ յուրաքանչյուր ոք պետք է իրացնի իր իրավունքները, որևէ մեկը իրավասու չէ այն խախտելու: Այնուհետև աշակերտները պատին փակցրին մեր կողմից հանձնարարած պաստառը.

Պետությունը պարտավոր է հարգել մարդու իրավունքները : Մարդիկ էլ՝ գիտակցենիրենց իրավունքներն ու պարտականությունները:

Դասի պլանի նմուշ

Դասարանը՝ 5 րդ

Հեղինակը՝Հ.

Թումանյան

Թեման՝<<Գիքորը>>

Ստեղծագործությանգաղափարը՝ Թումանյանի <<Գիքորը>> պատմվածքում ոտնահարված են երեխայի իրավունքները: Գիքորն անչափահասներին շահագործելու իրավունքի խախտման վառ օրինակ է :

Նպատակը՝երեխաների գիտակցությանը հասցնել , որ երեխաներն ունեն՝

1. Առողջության պահպանման իրավունք.
2. անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք.
3. կրթության իրավունք.[12]

Հովհաննես Թումանյանի <<Գիքորը >> ստեղծագործության ուսումնասիրությունը՝ որպես արտադասարանական ընթերցանություն , որոշեցինք 5-րդ դասարանի աշակերտների հետ : Դասը իրականացրինք Խ Ի Կ համակարգով: Ստեղծագործության գաղափարը բնականաբար դիտարկեցինք մարդու իրավունքների տեսանկյունից : Որպեսզի այդ ուղղությամբ երեխաները մտածեն , նախապես մշակեցինք հարցազրույցի հարցերը և դրանց միջոցով սկսեցինք քննարկումներ:

Խթանման փուլ

Նպատակը՝ բացահայտել մարդու իրավունքների մասին երեխաների ունեցած տեղեկություններն ու դրանց վերաբերյալ նրանց մոտեցումները:

Հարցազրույցի մոտավոր բովանդակությունը.

1. Եկե՛ք հիշենք, թե երեխաներն օրեքով ի՞նչ իրավունքներ ունեն:
2. Ի՞նչ է նշանակում իրավունքի շահագործում
3. Ի՞նչ է նշանակում թրաֆիկինգ:
4. Արդյո՞ք Գիքորը թրաֆիկինգի զոհ էր: Հիմնավորե՛ք ձեր կարծիքը:
5. Հանդիպե՞լ եք արդյոք ձեր շրջապատում երեխաների , որոնց շահագործումեն:
6. ՈՒ՞մ կարող են նրանք դիմել այդ դեպքում:

Իմաստավորման փուլ

Այս փուլում իրականացրեցինք հեքիաթի ընթերցում կարդալու բոլոր տեսակներով: Այնուհետև կանգառներով և ընտրովի ընթերցանության ճանա- պարհով դիտարկեցինք հեղինակային բառերն ու արտահայտությունները:Օրինակ՝ երեխաները կարդացին << Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան տղային տանի քաղաք , մի գործի տա , որ մարդ դառնա , աշխատանք անի >>,<< Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվեց բազազ Արտեմի տանը >>, << Պայման էր , Գիքորը պետք է տունը մաքրեր , ամանները լվանար, ոտնամանները սրբեր , դուքանը բաժին տաներ ու ես տեսակ մանր ծառայություններ, մինչև մի տարի>><< Հինգ տարի դեռ փող չեմ տալ,- ասավ բազազը պայմանը կապելիս >>,:[9]

Հովհաննես Թումանյանի <<Գիքորը >> ստեղծագործության ուսումնասի-ությունը՝ որպես արտադասարանական ընթերցանություն , որոշեցինք իրականացնել դպրոցի 5-րդ դասարանի աշակերտների հետ : Դասը իրականացրինք ԽԻԿ համակարգով: Ստեղծագործության գաղափարը բնականաբար դիտարկեցինք մարդու իրավունքների տեսանկյունից : Որպեսզի այդ ուղղությամբ երեխաները մտածեն , նախապես մշակեցինք հարցազրույցի հարցերը և դրանց միջոցով սկսեցինք քննարկումներ:

Խթանման փուլ

Նպատակը՝ բացահայտել մարդու իրավունքների մասին երեխաների ունեցած տեղեկություններն ու դրանց վերաբերյալ նրանց մոտեցումները:

Հարցազրույցի մոտավոր բովանդակությունը.

1. Եկե՛ք հիշենք, թե երեխաներն օրեքով ի՞նչ իրավունքներ ունեն:
2. Ի՞նչ է նշանակում իրավունքի շահագործում:
3. Ի՞նչ է նշանակում թրաֆիկինգ:
4. Արդյո՞ք Գիքորը թրաֆիկինգի զոհ էր: Հիմնավորե՛ք ձեր կարծիքը:
5. Ովքե՞ր են մերօրյա Գիքորները:
6. Հանդիպե՞լ եք արդյոք ձեր շրջապատում երեխաների , որոնց շահագործումեն:
7. ՈՒ՞մ կարող են նրանք դիմել այդ դեպքում:

Իմաստավորման փուլ

Այս փուլում իրականացրեցինք հեքիաթի ընթերցում կարդալու բոլոր տեսակներով: Այնուհետև կանգառներով և ընտրովի ընթերցանության ճանա- պարհով դիտարկեցինք հեղինակային բառերն ու արտահայտությունները:

Օրինակ՝ երեխաները կարդացին << Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան տղային տանի քաղաք , մի գործի տա , որ մարդ դառնա , աշխատանք անի >>,
<< Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվեց բազազ Արտեմի տանը >>, << Պայմանէր , Գիքորը պետք է տունը մաքրեր , ամանները լվանար, ոտնամանները սրբեր , դուքանը բաժին տաներ ու ես տեսակ մանր ծառայություններ, մինչև մի տարի>><< Հինգ տարի դեռ փող չեմ տալ,- ասավ բազազը պայմանը կապելիս >>,
<<Գիքորը խոսքը բերանում ՝ ապտակը հասավ , աչքերը կայծակին տվին, գլուխը դիպավ կողքի պատովն ու վեր ընկավ >> և այլն:[9]

Ուղղորդող հարցազրույցի մոտավոր բովանդակությունը .

1. Ինչու՞ Համբոն որոշեց Գիքորին քաղաք տանել:
2. Որպեսզի նա փող աշխատի:
3. Իսկ Համբոն իրավունք ունե՞ր Գիքորին տանել աշխատելու՝ առանց նրա կամքի:
4. Ո՛չ, որովհետև Գիքորը փոքր էր , ընդամենը տասներկու տարեկան. սա նրա աշխատանքային և առողջության իրավունքի խախտում է:
5. Բայց չէ՛ որ Համբոն աղքատ էր և ուզում էր , որ Գիքորն իրեն օգներ:
6. Աղքատությունը պատճառ չէ՛ , որ երեխային շահագործեն:

Այսպիսի մեկնաբանություններով ընթերցելու ընթացքում աշակերտները հատվածաբար վերլուծեցին հեքիաթը : Այս փուլում կատարվեց ընտրովի ընթերցանություն , որի ժամանակ նախապես մշակված հարցերի միջոցով աշակերտները քայլ առ քայլ մոտեցան ստեղծագործության գաղափարին:

Բուն գաղափարի վերլուծությունն աշակերտներն սկսեցին իմասավորման երկրորդ փուլում: Այս փուլում աշխատանքն իրականացվեց բոլորովին այլ ուղղությամբ:

_ Ի՞նչ եք կարծում , ո՞վ էր մեղավոր Գիքորի մահվան համար ՝ բազազ Արտեմը, թե՞ Համբոն:

_ Համբո՛ն ,- միաբերան բացականչեցին երեխաները:

_ Ինչու՞, չէ՛ որ Բազազ Արտեմն էր նրան շահագործում:

_ Իսկ Համբոն նրա հայրն էր և պարտավոր էր պաշտպանել իր երեխային:

_Ի՞նչ եք կարծում , այսօր Գիքորներ կա՞ն:

_Իհարկե՛:

_ Ովքե՞ր են մերօրյա Գիքորները:

_Դրանք մուրացիկ երեխաներն են, որոնց կարող ենք հանդիպել ամենուր՝Երևանի փողոցներում , բակերում:

_Այո՛ , սա՛ է թրաֆիկինգը ,- ամփոփեցինք մենք :

Աշակերտների դատողություններն աստիճանաբար սկսեցին գնալ այն ուղ-ղությամբ , որից սկսել էինք խթանման փուլում:

Աշխատանքն իրականացրինք <<Մտագրոհ>> մեթոդական հնարով:

-Աշակերտները բացականչեցին.

-Համբոն էր մեղավոր , նա չպիտի՛ Գիքորին տաներ ծառայելու բազազին:

-Գիքորի մահվան համար մեղավոր էր նրա ընտանի՛քը , նրանք պիտի պաշտ- պանեին իրենց երեխային և թույլ չտային , որ այդպիսի ողբերգություն տեղի ունենար:

-Գիքորը կարող էր մեծանալ և շատ լավ մարդ դառնար, բայց նրան թույլ չտվեցին ցավով նշեցին երեխաները:

Կշռադատման փուլ

Քանի որ Գիքորի այս վիճակի համար երեխաների մի մասը մեղադրում էր Համբոյին , մի մասն էլ Բազազ Արտեմին, ուստի այս փուլում որոշեցինք կազմակերպել խմբային աշխատանք:

Աշակերտները բաժանվեցին երկու խմբի :Ապա ընտրեցին խմբերի համապատասխան ավագներին :Նախապես պատրաստել էինք երկու տարբեր վերնագրերով պաստառ: Խմբերը պետք է լրացնեին այդ պաստառները.

Խումբ I՝

Մեղավոր էր Համբոն

Խումբ II՝

Մեղավոր էր Բազազ Արտեմը:

Երեխաները չափազանց մեծ ոգևորությամբ էին կատարում հանձնարարված աշխատանքը: Խմբի յուրաքանչյուր անդամ աշխատում էր բարձրաձայնել իր կարծիքը և նույնիսկ սկսեցին ակտիվ բանավիճել: Ի վերջո նրանք անփոփեցին իրենց մտքերը և խմբերի ավագների միջոցով լրացրեցին պաստառները : Այնուհետև նրանք մոտեցան գրատախտակին և կողք կողքի փակցրեցին լրացված պաստառները:

Մեղավոր էր Բազազ Արտեմը	Մեղավոր էր Համբոն
•Մեղավո՛ր էր , որովհետև նաև իր ըն – տանիքի անդամները վատ էին վերաբերվում Գիքորին: •Մեղավոր չէ՛ր, Գիքորը նրա որդին չէր և նրա սիրտը չէր ցավում Գիքորի համար: •Մեղավոր էր , եթե Գիքորը նրա որդին չէր , չի նշանակում ,որ նա կարող էր Գիքորին շահագործել:	•Մեղավոր էր, նա իրավունք չուներ Գիքորին այդ տարիքում տանել քաղաք աշխատելու: •Մեղավոր չէր, նա աղքատ էր և չէր կարողանում խնամել իր երեխաներին և ուզում էր , որ Գիքորն իրեն օգնի: •Մեղավոր էր, աղքատությունը պատճառ չէ ,որ երեխաներին զրկեն իրենց մանկությունից և հանձնեն ուրիշներին ծառայելու , այն էլ այդքան դաժան պայմաններում:

Որից հետո խմբերը միացան իրար և այս երկու պաստառների շուրջ կատարեցին եզրահանգում՝ միասին պատրաստելով III պաստառը:

Այսօրինակ դատողություններից հետո երեխաները գիտակցեցին իրենց իրավունքները և հասկացան , թե դրանց խախտման դեպքում ինչ կարելի է անել, և ում կարելի է դիմել:

Միաժամանակ կարևորում ենք նշել , որ մեր մանկավարժական փորձով համոզվել ենք, որ այսպիսի վերլուծություն անելիս պետք է շատ զգույշ լինել երեխաների հոգին շատ փխրուն է, և նրանք ունեն շատ խոցելի անկյուններ:

Ասպիսով՝ գործնական աշխատանքի արդյունքում նկատելիորեն զարգացան կրտսեր դպրոցականի համար չափորոշչային պահանջ համարվող հետևյալ կարողություններն ու հմտությունները՝

- Համագործակցային կարողություններ և հմտություններ՝ մասնակցել խմբի գործունեությանը, ուշադրություն դրսևորել ուրիշների կարծիքների, գաղա-փարների նկատմամբ:
- Ուսումնասիրվող թեմայի շուրջ տեսակետ ունենալ, ձևակերպել այն կապակցված խոսքով և ներկայացնել դասարանին:
- Մասնակցել թեմայի շուրջ իրականացվող քննարկումներին , հիմնավորել , համաձայնել կամ հակադրվել:
- Ստեղծագործական կարողություններ և հմտություններ՝ ստեղծագործաբար

Կիրառել ձեռք բերված գիտելիքները, ստեղծել պաստառներ:

Այս փուլում իրականցրինքկանգառներով և ընտրովի ընթերցանություն, որի ժամանակ դիտարկվեցին հեղինակային բառերն ու արտահայտությունները, ինչպես նաև հենակետային հատվածները:

Օրինակ՝ աշակերտները կարդացին << Էս հարուստը մի չլսված պայման է դնում ծառային>>, <<Պայմանը կապում են ու մտնում է ծառայության>>, << Մինչև էն ժամանակը , թե դու բարկանաս , դու հազար մանեթի տուգանք տաս ինձ, թե ես բարկանամ ՝ ես տամ>>, <<Ես որ հազար մանեթ չունեմ որտեղի՞ց տամ>>, << Բան չկա , փոխարենը ինձ տասը տարի ձրի կծառայես >>,<< Մարդ ինչ անի, իրեն կանի>>[9]և այլն: Մեր ուղղորդող հարցերի օգնությամբ մեկնաբանեցին:

Ուղղորդող հարցերի մոտավոր բովանդակությունը.

1. Ինչու՞ է հարուստը պայման դնում տղային:

- Որովհետև նա ուզում էր խաբել, ձրի աշխատեցնել տղային:

2. Ինչու՞ էր հարուստը գումար առաջարկում տղային:

- Որովհետև նա համոզված էր , որ տղան աղքատ է, գումար չունի և փո-խարենը տասը տարի կծառայի իրեն:

3. Իսկ ինչու՞ է հեղինակը գործածել <<Մարդ ինչ անի, իրեն կանի>>:

- Որովհետև այդ հարուստի նման ստախոսները միշտ էլ պատժվում են:

Այսպիսի մեկնաբանություններով հատվածաբար ընթերցելու ընթացքում աշակերտները հատված առ հատված վերլուծում էին հեքիաթի բովանդակությունը: Այս փուլում կատարեցինք է նաև ընտրովի

ընթերցանություն, որի ժամանակ նախապես մշակված հարցերի ու առաջադրանքների միջոցով աշակերտները քայլ առ քայլ մոտեցան ստեղծագործության հիմնական մտքին՝ գաղափարին: Որից հետո աշխատանքն իրականացրինք բոլորովին այլ ուղղությամբ:

- Որովհետև նա համոզված էր , որ տղան աղքատ է, գումար չունի և փոխարենը տասը տարի կծառայի իրեն:

4. Իսկ ինչու՞ է հեղինակը գործածել <<Մարդ ինչ անի, իրեն կանի>>:

- Որովհետև այդ հարուստի նման ստախոսները միշտ էլ պատժվում են:

Այսպիսի մեկնաբանություններով հատվածաբար ընթերցելու ընթացքում աշակերտները հատված առ հատված վերլուծում էին հեքիաթի բովանդակությունը: Այս փուլում կատարեցինք է նաև ընտրովի ընթերցանություն, որի ժամանակ նախապես մշակված հարցերի ու առաջադրանքների միջոցով աշակերտները քայլ առ քայլ մոտեցան ստեղծագործության հիմնական մտքին՝ գաղափարին: Որից հետո աշխատանքն իրականացրինք բոլորովին այլ ուղղությամբ:

<< Մարդ ինչ անի , իրեն կանի >>:

Պատին փակցրեցինք այսպիսի մի պաստառ:

-Ի՞նչ եք կարծում << Տերն ու ծառան>> հեքիաթի հարուստը չա՞ր էր:

-Այո՛, - միաբերան բացականչեցին երեխաները:

-Ինչու՞ , բայց չէ՞ որ նա միայն ուզում էր իր գործը առաջ տաներ:

-Խաբեությամբ գործ առաջ չեն տանում:

-Տղան խաբնվեց , որովհետև չգիտեր իր աշխատանքային իրավունքները:

-Ո՛չ, նա մեղավոր չէր , որովհետև նրան ոչ ոք չէր ասել այդ մասին:

Այսպիսի դատողություններից հետո դասը ընթացավ այնպիսի ուղղությամբ , որից սկսել էինք խթանման փուլում: Այնուհետև հարցերի

միջոցով աշակերտներն աստիճանաբար հանգեցին եզրակացության: Մերայն հարցին , թե երբ տղային չէին խաբի, երեխաները պատասխանեցին.

Կշռադատման փուլ

- Եթե տղան իմանար իր աշխատանքային իրավունքների մասին, նրան ոչոք չէր խաբի: Ոչ ոք իրավունք չունի բռնի ուժով , խաբելով աշխատեցնել կամ ծառայեցնելորևէ մեկին:
- Հարուստ, թե՛ աղքատ կապ չունի, -բացականչեցին երեխաները, բոլորն էլ ունեն հավասար աշխատանքային իրավունքներ /<<Սահմանադրություն>> հոդված 32/[12]:

Ինչպես տեսնում ենք դասը հասավ իր նպատակին:

Որպեսզի ստեղծագործության գաղափարը բացահայտվի, պետք է հնարա-վորություն ընձեռել սովորողներին՝ ազատ մտածելու, իրենց կարծիքները արտահայտելու և դատողություններ անելու:

2.3.<<Կարդացած ստեղծագործության վերլուծումըերեխայի իրավունքի տեսանկյունից >>թեմայով հետազոտության ընթացքի և արդյունավետության դիտարկում

Հիմք ընդունելով միջին դասարաններում կարդացած ստեղծագործության վերլուծումը երեխայի իրավունքի տեսանկյունից իրականացնելու վերաբերյալ առկա մոտեցումները և մեր իրականացրած հետազոտությունը՝ փորձել ենք նաև հարցաթերթիկի միջոցով ուսուցիչների շրջանում պարզել միջին դպրոցի մայրենիի դասերին այսպիսի վերլուծություններ իրականացնելու հնարավորությունն ու արդյունավետությունը:

Հարցաթերթիկը բաղկացած էր 10 հարցից.դրանցից 8-ը փակ հարցեր էին, որոնցից ուսուցիչները ընտրելու էին տրված պատասխանները, իսկ 2-ը բաց հարցեր, որոնց պատասխանները ուսուցիչները իրենք պետք է լրացնեին :

Հարցմանը մասնակցել են 15ուսուցիչներ:

Ստորև ներկայացնում ենք հարցաթերթիկի պատասխանների ընդհանուր վերլուծությունները:

Այսպիսով հարցին, թե կարդացած ստեղծագործության վերլուծումը երեխայի իրավունքի տեսանկյունից արդյունավե՞տ է միջին դպրոցում մայրենի լեզվի դասաժամերին, ուսուցիչների մեծամասնությունը պատասխանել էին, որ արդյունավետ է ,հիմնավորելով, որ այսօրինակ վերլուծումը սովորողների մոտ ձևավորում է և զարգացնում ինքնուրույնություն, սեփական իրավունքների ու պարտականությունների իմացություն, իրավագիտակցության բարձր մակարդակ , խմբային աշխատանքի հանդեպ սեր, որն անփոխարինելի է ուսուցման մեջ: Նշվել է նաև, որ այն նպաստում է չափորոշչային պահանջ հանդիսացող մի շարք կարողութ-յունների և հմտությունների զարգացմանը:

Այսպիսով՝ հարցաթերթիկի հարցերից ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ կարդացած ստեղծագործության վերլուծումը երեխայի իրավունքի տեսանկյունից արդյունավետ է միջին դպրոցի մայրենի լեզվի դասերը ուսումնասիրելիս, և այն հանդիսանում է անփոխարինելի միջոցներից մեկը ուսուցման գործընթացում, քանի որ այս մեթոդի օգնությամբ ապահովվում է

սովորողների համար չափորոշչային պահանջ հանդիսացող մի շարք որակների զարգացումը:

Ստորև ներկայացնում ենք հարցաթերթիկի պատասխանների վերլուծություն-ները: Հարցմանը մասնակից բոլոր ուսուցիչներն անչափ կարևոր են համարելստեղծագործության վերլուծումը երեխայի իրավունքի տեսանկյունից :



Գծապատկեր 3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Մեր հիմնախնդրին վերաբերող գրականության մեջ մի շարք հեղինակներ թեև անդրադարձել են սերնդի իրավական դաստիարակության խնդիրներին, բայց ուսումնական գործընթացում դրանց ուսումնասիրման ուղղությամբ մեթոդական ցուցումներ գրեթե չկան գրականության մեջ:

2.Ուսումնասիրելով իրավական խնդիրներ դիտարկող ստեղծագոր- ծությունների ընդգրկվածությունը միջին դասարանների մայրենիի դասագրքերում՝ մենք բացահայտեցինք , որ այն լայնորեն ընդգրկված է, պարզապես պետք է ճիշտ հարցադրումների միջոցով բացահայտել այդ խնդիրը՝ ապահովելով միջառարկայական կապերը, հաշվի առնելով սովորողների տարիքային և անհա- տական առանձնահատկությունները, հիմք ստեղծելով կյանքում իրենց արժանի տեղը գտնելու և իրավագիտակից ու մարդասեր քաղաքացիներ դառնալու համար:

3.Մեր դասալսումների և աշակերտների հետ իրականացրած հարցազրույցի միջոցով պարզեցինք , որ միջին դպրոցականները իրազեկված չեն իրենց իրավունքների և պարտականությունների մասին և ոչ միշտ են պատկերացնում ծագած խնդիրների լուծման ուղիները ,գիտակցում իրենց թույլ տված զանցանքների հետևանքներն ու դրանց համար նախատեսված պատիժները;

4.Ուսուցիչների շրջանում անցկացված հարցումների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ կարդացած ստեղծագործության բովանդակության վերլուծումը երեխայի իրավունքի տեսանկյունից արդյունավետ է մայրենիի դասերը ուսումնասիրելիս, և այն անփոխարինելի միջոցներից մեկն է ուսուցման գործընթացում, քանի որ այսպիսի վերլուծությունների օգնությամբ ապահովվում է սովորողների համար չափորոշչային պահանջ հանդիսացող մի շարք անձնային որակների զարգացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱմիրջանյանՅու. Ա.,ՍահակյանԱ. Ս.<<Մանկավարժություն>>-Երևան 2005:
2. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018:
3. Գյուլամիրյան Ջ.,<<Կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացումն արտադասարանային առաջադրանքների միջոցով>>,Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, 2010:
4. Գյուլամիրյան Ջ., <<Ապագա դասվարների հետազոտական ունակությունների ձևավորումը որպես բարձրակարգ մասնագիտական պատրաստակա-նության հիմնական ցուցանիշ>>,<< Մանկավարժական միտք >>, Զանգակ-97, 2014:
5. Թումանյան Հովհ. ,<< Լեգենդներ , առակներ , զրույցներ , հեքիաթներ>>, Եր., Լույս, 1993:
6. «Կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 1999, հոդված 3/կետ 1/:
7. Հ Հ օրենքը << Երեխայի իրավունքների մասին >>:
8. ՀՀ Սահմանադրություն- 2015:
9. Հանրակրթության պետական չափորոշիչ, 2012:
10. Հովսեփյան Ա., Կարապետյան Ա. և այլք, << Ես և շրջակա աշխարհը 3 >>, Երևան, Մակմիլան-Արմենիա, 2009:
11. ՄԱԿ –ի կոնվենցիա << Երեխայի իրավունքների մասին>>, 1989:
12. Пахомова, Н. Ю. Метод учебного проекта в образовательном учреждении. Пособие для учителей и студентов педагогических вузов .АРКТИ, 2013.
13. Харитончик Т. А. , Правовое воспитание . Изд. Учитель , 2017